

ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՍՏԱՅԱՅԵՐԵՆԻ
ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հրաչյա Աճառյանը հայերենի երկփեղկվածության սկիզբը համարում է 11-րդ դարը:

Երկու գրականների բարբառային հիմքերը տարբեր են. արևելահայերենը ձևավորվել է Արարատյան բարբառի հիման վրա, իսկ արևմտահայերենը՝ Պոլսի: «Բարբառային զանազան հիմքեր ունեցող գրական տարբերակների մեջ աստիճանաբար գերիշխող դիրք են գրավում երկուսը՝ Արարատյան և Պոլսի բարբառները, որոնցից առաջինն արդեն ուներ արևելահայ(-ում) բարբառաճյուղի ձևավորված հատկանիշները, երկրորդը՝ արևմտահայ(կու-) ճյուղինը՝ ներկայացնելով հին Կիլիկյան բարբառին մոտ մի բարբառ և արևմտահայ բարբառային հիմքի հետագա զարգացման, փոփոխման ու ճյուղավորման արդյունք, որ գրական մուշներում ենթարկվել է Կիլիկյան միջին գրական հայերենի ազդեցությանը»¹:

Թե ինչու հենց Արարատյան և Պոլսի բարբառները դրվեցին գրական լեզուների հիմքում, բացատրվում է նրանով, որ «ամեն լեզուի համար ի զօրու եղող կանոնի մը համաձայն, որևէ գաւառի կամ քաղաքի մէջ խօսուած լեզուն գերակայ դիրք կունենայ բաղդատմամբ դրացի գաւառներու կամ քաղաքներու լեզուներուն և ստուեր կածե անոնց վրայ, ալնպէս որ շուքի մէջ թողուած լեզուները կը մնան գաւառաբարբառ, իսկ միւսները կը դառնան գրական լեզու: Ինչպէս որ հին Հայոց միջերկրեայ լեզուն միայն, ոստանիկը, եղած է մեր դասական գրականութեան լեզուն, նմանապէս Կ. Պոլսոյ և իր շրջանակներու բարբառը կազմած է հիմքը մեր արդի աշխարհաբարին»²:

Հայերենի երկու տարբերակները նախապէս անվանվել են ռուսահայերեն և թուրքահայերեն՝ պայմանավորված տարածքային համագամանքներով: Ջահուկյանը, խոսելով այս հարցի շուրջ, նպատակահարմար է գտնում «արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ» անվանումը:

Տարբեր են երկու գրականների պատմական հիմքերը. արևելահայերենը մի շարք առանձնահատկություններով կապված է գրաբարի, իսկ արևմտահայերենը՝ միջին հայերենի հետ: Որպէս հիմնական առանձնահատկություն՝ կարելի է նշել, որ արևելահայերենը պահպանում է գրաբարյան եռաշարք բաղա-

¹ Հր. Աճառյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964, էջ 51:

² Թորոսեան, Արեւմտահայ աշխարհաբարի ծագումը և զարգացումը, 1961, էջ 33:

ծայնական համակարգը, իսկ արևմտահայերենն այս հարցում պահպանում է միջինհայերենյան երկաստիճան խլազուրկ համակարգը(բ-պ-փ/բ-փ):

Երկու լեզուների միավորման շուրջ եղած բանավեճերը գալիս են դեռևս Մ. Աբեղյանից: Վերջինս դրա լուծումը տեսնում է երկու լեզուները հնարավորինս իրար մոտեցնելու մեջ, որի համար էլ առաջարկում է ինը կետից բաղկացած մի ծրագիր: Հետագայում հայտնի մանկավարժ Սեդրակ Սանդիսյանը քննադատում է Աբեղյանի առաջարկը՝ գտնելով, որ զիջումներն ավելի շատ պահանջվում են արևմտահայերենից: Իսկ Գր. Վանցյանը, հարցը հիմքից կտրելով, գրում է. «Հռչակավոր Ներսիսյանի դպրոցի մանկավարժներից սկսած մինչև վերջին գործակատարը օտար լեզվով են ծեքախոսում... Այսօր ուտիերեն խոսողների թիվն ավելի շատ է, քան արևելյան հայերեն»³: Ձահուկյանը, խոսելով երկու լեզուների միացման հարցի շուրջ, հարցը սպառված է համարում. «Արևմտահայերի մասսայական կոտորածն ու գաղթը այս ենթաշրջանի վերջին վերացնում են հարցի կոմպրոմիսային լուծման հնարավորությունները»⁴:

1915 թվի եղեռնից հետո արևմտահայերենը զրկվում է միասնական տարածքում կենտրոնացած բնակչության լեզուն լինելուց, թեև շարունակում է մնալ սփյուռքահայության հիմնական լեզուն:

Առանց երկու գրականների բայականությանն անդրադառնալու անհնար է քննել բուն բայական համակարգերը: Արևելահայերենը գրաբայյան չորս լծորդություններից պահպանել է միայն երկուսը՝ «ա», «ե», մինչդեռ արևմտահայերենը՝ երեք՝ «ա», «ե», «ի»: «Ու» -ն առանձին լծորդություն չի համարվում, քանի որ այս լծորդության սակավ բայերից (թողուլ, զբոսնուլ, երդնուլ և այլն) միայն «հեղուլ» բայն ունի հարացույցի բոլոր ձևերը՝ չնայած որոշ լեզվաբաններ արևմտահայերենում «ու»-ն առանձին լծորդություն են համարում:

Բայահիմքերի հարցում ևս նկատելի են որոշակի տարբերություններ. եթե արևելահայերենում տարբերակում ենք բայական երեք հիմք՝ կատարյալի, անկատարի, դերբայական, ապա արևմտահայերենում վերջինս առանձին բայական հիմք չի համարվում: Արևմտահայերենում բացակայում է նաև կատարյալի ռեական հիմքը, քանի որ այս հիմքն արևելահայերենում ստանում են պատճառական բայերը, ինչպես՝ «մոտեցնել // մոտեցր-». արևմտահայերենում վերջիններս ունեն կատարյալի ցոյական հիմք, ինչպես՝ «մոտեցնել // մոտեցր-»:

Աբեղյանը գտնում է, որ արևելահայերենի ռեական հիմքը առաջացել է հրամայականի ձևից. «այդպես և պատճառական բայերի հրամայականը

³ Արարատ, 1987թ, էջ 134:

⁴ Ձահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, 1964թ, Երևան, էջ 66:

դարձել է մեծացու, ապա ավելացել է ը՝ մեծացուր, ինչպես է արևմտյան բարբառում, իսկ արևելյան բարբառում ետևառաջությամբ՝ մեծացրու: Հետագայում այս նոր հրամայականը դարձել է կատարյալի և հոգնակի հրամայականի բուն»⁵:

Արևմտահայերենում «ի» լծորդության բայերի կատարյալի հիմքի կազմության ժամանակ փոխում են լծորդությունը՝ «ի>ե»: Արևմտահայերենում կատարյալի արմատական հիմք ունեն «բերել», «ըսել», «նստիլ», «սկսիլ», «փրթիլ», «պրծիլ», «ծնիլ» բայերը: Վերջիններս արևելահայերենում ունեն ցոյական հիմք:

Բայի սեռի տարբերակման հարցում արևելահայ և արևմտահայ գրական լեզուները որոշակիորեն տարբերվում են: Եթե արևելահայերենում քերականներն առանձնացնում են բայի երեք սեռ՝ ներգործական, կրավորական և չեզոք, ապա արևմտահայերենում դրանք վեցն են՝ ներգործական, կրավորական, չեզոք, անդրադարձ, պատճառական, փոխադարձ: Արևելահայերենում կրավորական բայերի չեզոք իմաստի դրսևորումներից են անդրադարձ և փոխադարձ բայերը, որոնք արևմտահայերենում առանձին սեռ են կազմում:

Արևմտահայերենում փոխադարձ սեռի բայերն ունեն ծևական ցուցիչ՝ «ի» լծորդությունը, ինչպես՝ «համբուրուիլ», «գրկուիլ»:

Անդրադարձ սեռի բայերը երկու գրականներում էլ սահմանափակ թիվ ունեն և նույնանում են: Խոնարիվելիս անդրադարձ և փոխադարձ սեռի բայերն արևմտահայերենում ստանում են կրավորակերպ վերջավորություն, ինչպես՝ «սանտրուեցալ», «համբուրուեցալ»:

Ինչպես գիտենք, արևելահայերենում ներգործական սեռի բայերն ըստ կազմության լինում են պարզ ու ածանցավոր, վերջիններս պատճառական բայերն են, որոնք կազմվում են պատճառական ածանցների միջոցով: Արևմտահայերենում պատճառական բայերն առանձին սեռ են կազմում:

Խոսելով ներգործական սեռի մասին՝ պետք է նշել մի հանգամանք, արևելահայերենում ներգործական սեռի բայերը միշտ ընդունում են «ում», «ինչ»՝ հարցերը՝ պայմանավորված անձի և իրի առման առկայությամբ: Արևմտահայերենում ներգործական սեռի բայերը պատասխանում են «ինչ», «ով» հարցերին, քանի որ բացակայում է անձի և իրի առումը: Սակայն «այսօր արևմտահայերենի մի քանի բայեր արևելահայերենի մեմ (կամ նրա ազդեցությամբ) սկսել են ընդունել ուղիղ խնդիր անձի առումով, խնայել հացը և խնայել մեղավորին, զարմել թռչուն և զարմել Սշոտին, ներել պարտքը և ներել աշակերտին»⁶:

⁵ Սբեդյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 342-343:

⁶ Սաքապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006, էջ 145:

Եթե արևելահայերենում կրավորական սեռի բայերի արտահայտած կրավորական և չեզոք իմաստները ձևային առումով չեն տարբերվում, ապա նույնը չի կարելի ասել արևմտահայերենի դեպքում: Վերջինս կազմում է եռանդամ հակադրություն՝ «կրավորական սեռի համար գործածելով -ուիլ(վիլ), իսկ կրավորակերպ չեզոք իմաստներով՝ -իլ լծորդներով բայեր, ինչպես օրինակ դատել-դատուիլ-դատիլ, կտրել-կտրուիլ-կտրիլ, ծռել-ծռուիլ-ծռիլ, ուր առաջին բայը ներգործական է, երկրորդը՝ կրավորական, իսկ երրորդը՝ չեզոք»⁷: Սա բացատրվում է նրանով, որ «միջին հայերենում Վ/ԻՈ/ ածանցի առաջացմամբ հնարավորություն է ստեղծվում անցողական բայերի մեջ տարբերակելու ներգործական, կրավորական և չեզոք սեռի ձևեր, ինչպես եփեմ(ն), եփիմ(չ), եփվիմ(կ) ... Միջին հայերենի անցողական բայերի երեք սեռերը պահպանվել են Պոլսի բարբառում, որից և մասնակիորեն անցել են արևմտահայ գրական լեզվին»⁸: Սակայն արևմտահայերենում ոչ բոլոր բայերին է հատուկ վերոհիշյալ եռանդամ հակադրությունը: Բայակազմական տարբերությունները քննելուց հետո անցնենք բուն բայական համակարգին:

Արդի արևելահայերենում քերականներն ընդունում են հինգ եղանակ՝ սահմանական, ըղծական, ենթադրական, հարկադրական, հրամայական, իսկ արևմտահայերենում՝ չորս: Վերջինս չունի պայմանական եղանակ, քանի որ այն բաղադրող «կը» մասնիկն արևմտահայերենում եղանականիշ է, իսկ արևելահայերենում՝ ժամանականիշ:

Արևմտահայերենը, ձևավորվելով Պոլսի բարբառի հիման վրա, սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմում է «կը» մասնիկով, իսկ արևելահայերենը, ձևավորվելով Արարատյան բարբառի հիման վրա՝ «-ում» մասնիկով, ինչպես՝ «կը գրեմ//գրում եմ», «կը գրեի//գրում էի»: Արևմտահայերենում երեք բայերի ներկա ժամանակը կազմվում է «կու-» մասնիկով, ինչպես «կու գամ, կու լամ, կու տամ»: Ժողովրդախոսակցական լեզվում գործողության շարունակականությունը շեշտելու համար գործածվում է «կոր» մասնիկը, ինչպես՝ «կու գայ կոր, կը մնայ կոր» և այլն: «Պետք է ասել, որ թեև շարունակականի ձևերը ներթափանցել են նաև գրական լեզվի մեջ, բայց առ այսօր որոշ գույություն կա այդ ձևերը գրական մշակված լեզվում գործածելու ժամանակ»⁹:

Արևմտահայերենում կան որոշ բայեր, որոնք ներկա ժամանակը կազմում են առանց «կը» մասնիկի, դրանք են՝ «գիտեմ», «կամ», «կրնամ», «ունիմ»: Ի

⁷ Սաքապետոյան, արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006, էջ 144:

⁸ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1983, էջ 232:

⁹ Սարգսյան Ա., Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Երևան, 1985թ., էջ 233:

դեպ, ըստ Այտընյանի՝ «կը» մասնիկը ծագել է «կայ ու» կապակցության սղումից:

Արևելահայերենում վիճահարույց է «հարակատար+ են, էի» կառույցը ժամանակային ձև համարելու հարցը, մինչդեռ արևմտահայերենում այն կազմում է սահմանական եղանակի հարակատար ներկա և հարակատար անցյալ ժամանակաձևերը, ինչպես՝ «գրած են , կարդացած էի»:

Թե ինչու արևելահայերենը հարակատար դերբայով ժամանակային ձևեր չի կարող կազմել, բացատրվում է նրանով, որ հարակատար ժամանակներ կարող են կազմել միայն կրավորական սեռի բայերը և չեզոք սեռի այն բայերը , որոնց մեջ առկա է գործողության հետևանքի գաղափարը: Զանի որ կրավորական սեռի բայերը հարակատար ժամանակներ են կազմում, իսկ ներգործական սեռի բայերը՝ ոչ, ապա Մ. Ասատրյանը երևույթը բացատրում է այդ սեռերի դրսևորած գործողությունների բնույթների տարբերությամբ: « Գիտենք, որ ներգործական և կրավորական սեռերն անմիջական հակադրություն են կազմում. ներգործական սեռի բայերը ցույց են տալիս գործողություն, որ դուրս է գալիս ենթակայից և անցնում խնդրին, օրինակ՝ Աշակերտը հարգում է ուսուցչին, իսկ կրավորական սեռի բայերը ցույց են տալիս գործողություն, որ դուրս է գալիս խնդրից և անցնում ենթակային, ինչպես՝ Ուսուցիչը հարգվում է աշակերտից: Եվ եթե հարակատար ժամանակները ցույց են տալիս ենթակայի դրությունը, վիճակը, որն արդյունք է որոշակի գործողության, հենց իմաստային այս առանձնահատկությունից բխում է, որ ներգործական սեռի բայերը հարակատար ժամանակներով գործածվել չեն կարող, որովհետև դրանց ցույց տված գործողությունը, որ դուրս է գալիս ենթակայից , չի կարող այդ նույն ենթակայի համար հարատևող վիճակ ստեղծել... կրավորական սեռի բայերի համար հարակատար ժամանակները բնորոշ են, որովհետև նրանք ցույց են տալիս մի գործողություն, որն ուղղված է ենթակային, ենթակայի մեջ է, հետևաբար նրա համար կարող է ստեղծել կայուն վիճակ, ինչպես՝ Ուսուցիչը հարգված է»¹⁰ :

Արևմտահայերենում, առհասարակ, հարակատարով կազմված ժամանակաձևերը բավականին լայն տարածում ունեն: «Այնտեղ, ուր արևելահայերենը նախընտրում է վաղակատար ժամանակը, արևմտահայերենը դիմում է հարակատարի ձևերին»¹¹:

Աղայանն այն կարծիքն է հայտնում, որ հարակատարն ունի գործողության շարունակական կերպ և կապակցվելով օժանդակ բայի ներկայի ձևերի հետ՝ կազմում է շարունակական ներկայի գաղափար, իսկ անցյալի ձևերի հետ կապակցվելով՝ արտահայտում է շարունակական անցյալի գաղափար: Ըստ

¹⁰ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1983, էջ 280:

¹¹ Ա. Մարգարյան, նույն տեղում, էջ 233:

այդմ էլ եղ. Աղայանը «հարակատար+եմ» կառույցն անվանում է վիճակի ներկա, իսկ «հարակատար+ի» կառույցը՝ վիճակի անցյալ:

Սահմանական եղանակի վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերի տարբերություններն ի հայտ են գալիս վաղակատար դերբայի կազմության հարցում, քանի որ գրաբարյան անցյալ դերբայը կրել է փոփոխություններ՝ «յուրաքանչյուր բարբառի հնչյունական օրինաչափություններին համապատասխան»՝ արևելահայերենում ստանալով «-ել», արևմտահայերենում՝ «-եր» վերջավորությունները, ինչպես՝ «գրել եմ/գրեր եմ», «գրել էի/գրեր էի»:

Արևելահայերենում վաղակատար դերբայով կազմված ժամանակաձևերն ունեն ավելի մեծ հաճախականություն, քան արևմտահայերենում: «Այնտեղ, ուր արևելահայերենը նախընտրում է վաղակատար ժամանակը, արևմտահայերենը դիմում է հարակատարի ձևերին»¹²:

Արևելահայերենում սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևերը կազմվում են ապառնի դերբայի և օժանդակ բայի ձևերով, իսկ արևմտահայերենում՝ «պիտի» մասնիկի և ըղծական ձևերով, ինչպես՝ «խոսելու եմ //պիտի խօսիմ»: Փաստորեն «պիտի» մասնիկն արևելահայերենում եղանականիշ է, իսկ արևմտահայերենում՝ ժամանականիշ: Ի դեպ, «պիտի» եղանակիչով ձևերը երկար ժամանակ քերականագիտության մեջ ժամանակային ձևեր չեն համարվել. քանի որ «պիտիմ» բայի խոնարհված ձևն է: Այս հարցը վերջնականապես լուծեց Մ.Աբեղյանը՝ արևելահայերենում ընդունելով առանձին հարկադրական եղանակ:

Եվ արևելահայ, և արևմտահայ գրական լեզուներում ըղծական եղանակն ունի երկու ժամանակաձև՝ ապառնի և անցյալի ապառնի: Ի տարբերություն արևելահայերենի, որտեղ ներկա ժամանակաձևն ունի դիմային երկու վերջավորություն, արևմտահայերենում դրանք երեքն են՝ պայմանավորված «ի» լծորդության առկայությամբ, ինչպես՝ «խօսիմ», «խօսիս», «խօսիմք» և այլն: Արևմտահայերենում այս բանաձևերի հետ կիրառվում է նաև «թող» բառը, որն արտահայտում է խոսողի կամքը, ինչպես՝ «Թող գայ և վերջին անգամ գիս տեսնե»:

Ըղծական եղանակի անցյալի ապառնի ժամանակաձևի խոնարհման ժամանակ արևմտահայերենի «ի» լծորդության բայերը խոնարհվում են «ե» լծորդության բայերի նման, ինչպես՝ «խօսեի»:

Հարկադրական եղանակն արևելահայերենում կազմվում է ըղծական եղանակից «պիտի» եղանակիչի հավելումով, իսկ արևմտահայերենում՝

¹² Ա. Սարգսյան, նույն տեղում, էջ 234:

ապառնի դերբայի և օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերով, ինչպես՝ «պիտի երգեն //երգելու են, «պիտի երգեի//երգելու էի»։ Վերջինս արևելահայերենում կազմում է սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակները։

Արևելահայերենում ենթադրական եղանակը կազմվում է «կը» եղանակիչով և ըղծականի ժամանակաձևերով։ Արևմտահայերենում այս եղանակը բացակայում է, քանի որ այս ձևերը կազմում են սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը։

Արևելահայերենում հրամայական եղանակը կազմվում է «-իր», «-ու», «-եք» վերջավորություններով, արևմտահայերենի հրամայականի ձևերում նկատելի են որոշակի տարբերություններ։ Արևելահայերենում հրամայական եղանակի եզակի թվում «-ու» վերջավորությունն են ստանում պատճառական բայերը՝ կատարյալի թեական հիմքից, մինչդեռ արևմտահայերենում պատճառական բայերի հրամայական եղանակի եզակի թիվը կազմվում է «-ուր» վերջավորությամբ՝ կատարյալի ցոյական հիմքից, ինչպես՝ «մոտեցնել/ մոտեցրու/ մոտեցուր»։

Արևմտահայերենում հրամայական եղանակի եզակի թիվը կազմվում է նաև «-է» վերջավորությամբ, որն արևելահայերենում բացակայում է, ինչպես՝ «գրել/գրէ», «նայի/նայէ»։

Արևմտահայերենում հրամայական եղանակում այս վերջավորությունն են ստանում «ե», «ի» լծորդության պարզ բայերը։

Արդի հայերենի արևելահայ և արևմտահայ ճյուղերում խոնարհման համակարգի ժխտական ձևերը կազմվում են «չ», «մի» մասնիկներով։ «2» մասնիկն երկու գրականներում էլ առաջադիր է, սակայն խոնարհման ժամանակ առաջ են գալիս որոշակի տարբերություններ։

Սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևերի ժխտականն արևմտահայերենում կազմվում է «չ» մասնիկը հավելելով եղանակիչին, ի տարբերություն արևելահայերենի հարկադրական եղանակի ժխտական ձևերի, որոնք կազմվում են «չ» մասնիկը հավելելով բայաձևի վրա, ինչպես՝ «պիտի չգրեն/չպիտի գրեն»։

Եթե արևելահայերենում սահմանական եղանակի ներկա և անցյալ ժամանակաձևերի ժխտական խոնարհումը կազմվում է «չ+օժանդակ բայ+ժխտական դերբայ» կաղապարով, ապա արևմտահայերենում՝ «չ+օժանդակ բայ+վաղակատար դերբայ», ինչպես՝ «չեն գրում/չեն գրեր»։

Արևմտահայերենում սահմանական եղանակի վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակների ժխտական ձևերը գործածական չեն.

դրանք լրացվում են հարակատար դերբայի ձևերով, ինչպես՝ «չեմ գրել/չեմ գրած»:

Արևմտահայերենի հարակատար դերբայով կազմված ժամանակների ժխտականը ևս կազմվում է օժանդակ բայի ժխտմամբ, սակայն նախադաս դիրքում, ինչպես՝ «սիրված չեմ/չեմ սիրված»:

Երկու գրականներում էլ արգելական հրամայականը կազմվում է «մի» արգելականի կցումով՝ արևելահայերենում դրական հրամայականի ձևերից, իսկ արևմտահայերենում եզակի թվի դեպքում անորոշ դերբայի «լ» վերջնա-հնչյունը «ր»-ի փոխելով, հոգնակի թվի դեպքում՝ ըզծական ապառնիի ձևից, ինչպես՝ «մի գրիր/մի գրեր», «մի գրեք/մի գրեք»:

Ինչպես արևելահայերենը, արևմտահայերենը ևս գլխավոր ժամանակներից բացի ունի երկրորդական բաղադրյալ ժամանակներ: Արևելահայերենում այն կազմվում է ապառնի I(-ու), անկատար II(-իս), հարակատար(-ած) դերբայների և «լինել» բայի հարադրությամբ, իսկ արևմտահայերենում՝ ապառնի I(-ու), հարակատար(-ած) դերբայների և «ըլլալ» բայի կցմամբ. վերջինս չունի անկատար II(-իս) դերբայ, ինչպես՝ «գրած կլինեմ/գրած կըլլամ»:

Անկանոն բայերը արևելահայ և արևմտահայ գրական լեզուներում հիմնականում համընկնում են. որքան էլ տարօրինակ թվա, դրանք լեզվի մեջ ամենագործածական բառերն են:

Անկանոնությունը դրսևորվում է կատարյալի հիմքից կազմվող ձևերում, նաև՝ հրամայականում: Արևելահայերենում կան երեք բայեր, որոնց անկանոնությունը դրսևորվում է անկատարի հիմքում(զալ, լալ, տալ):

«Լինել/ըլլալ», «ուտել», «զալ» բայերը տարարմատ են, քանի որ կատարյալի հիմքը կազմում են արմատի փոփոխմամբ՝ վերածվելով համապատասխանաբար «եղ», «կեր», «եկ» ձևերի: Այս հիմքերից են կազմվում վաղակատար և հարակատար դերբայները (նաև «զալ» բայի ենթակայական դերբայը), անցյալ կատարյալի և հրամայականի ձևերը, ինչպես՝ «եղած-եղել/եղած-եղեր», «կերած-կերել/կերած-կերեր», «եկել-եկած-եկող/եկեր-եկած-եկող», «եկա-եղա-կերա//եկայ-եղայ-կերայ», «եղի ռ-եղեք/եղի ռ-եղեք», «կեր-կերեք/կեր-կերեք», «եկ-եկեք/եկու ռ-եկեք»:

«Դնել», «տանել/տանիլ», «անել/ընել» բայերի կատարյալի հիմքը կազմվում է «ն-ր» անցմամբ: Այս հիմքով են կազմվում վաղակատար, հարակատար դերբայները, անցյալ կատարյալի և հրամայականի ձևերը, ինչպես՝ «դրել-դրած/դրեր-դրած», «տարել-տարած/տարեր-տարած», «արել-արած/ըրեր-ըրած», «դրի-տարա-արի//դրի-տարայ-ըրի», «դի ռ-դրեք//դի ռ-դրեք», «տար-տարեք//տար-տարեք», «արա-արեք//ըրե-ըրեք»:

«Տալ», «լալ» բայերի կատարյալի հիմքերն են «տվ//տա», «լաց», որոնցից կազմվում են հարակատար, վաղակատար, ենթակայական դերբայները,

անցյալ կատարյալի և հրամայականի ձևերը, ինչպես՝ «տվել-տված-տվող//տու-
ւեր-տուած-տուող», «լացել-լացած-լացող//լացեր-լացած-լացող», «տվի-լացի//
տուի-լացի», «տուր-տվեք//տուր-տուեք», «լաց-լացեք//լաց-լացեք»:

«Կենալ», «բանալ» բայերի կատարյալի հիմքը ցոյական է՝ «կաց//կեց»,
«բաց»: Այս հիմքերից են կազմվում վաղակատար, հարակատար, ենթակայա-
կան դերբայները, անցյալ կատարյալի և հրամայականի ձևերը, ինչպես՝ «կա-
ցել-կացող-կացած//կեցեր-կեցող-կեցած», բացած-բացել-բացող//բացած-բա-
ցեր-բացող», «կացա-բացի//կեցայ-բացի», «կաց-կացեք», «բացի ու-բա-
ցեք//բաց-բացեք»:

«Ջարկել//զարնել» բայի կատարյալի հիմքն է «զարկ», որից կազմվում
են վաղակատար, հարակատար դերբայները, անցյալ կատարյալի և հրամայա-
կանի ձևերը, ինչպես՝ «զարկել-զարկած//զարկեր-զարկած», «զարկի//զարկի»,
«զարկ-զարկեք//զարկ-զարկեք»:

«Դառնալ», «բառնալ» բայերի կատարյալի հիմքն է «դարծ», «բարծ»,
որից կազմվում են վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները,
անցյալ կատարյալի և հրամայականի ձևերը, ինչպես՝ «դարծել-դարծած-
դարծող// դարծեր-դարծած-դարծող», «դարծա//դարծայ», «դարծի ու-դարծեք//
դարծի ու-դարծեք»:

«Ելնել», «առնել», «տեսնել» բայերի անկանոնությունը արևելահայ և
արևմտահայ լեզուներում դրսևորվում է հրամայական եղանակի եզակի թվում՝
համապատասխանաբար դառնալով «ել», «առ», «տես»:

Պակասավոր են կոչվում այն բայերը, որոնք խոնարհման համակարգում
բոլոր ձևերը չունեն: Պակասող ձևերը լրացնող բայերը կոչվում են հավելավոր
բայեր. սրանք արևելահայ և արևմտահայ լեզուներում հիմնականում համընկ-
նում են: Երկու գրականների համար ընդհանուր պակասավոր բայերն են «են»,
«կամ», «գիտեն», «ունեն//ունիմ»: Արևմտահայերենում պակասավոր են նաև
«երևիլ», «պարտիմ», «կրնամ», «երդնուլ», «երթալ» բայերը, իսկ արևելահայե-
րենում՝ «արժեն», «ցանկանալ», «հուսալ», «լվալ»:

«Եմ» բայն ունի միայն սահմանական եղանակի ներկա և անցյալ անկա-
տար ժամանակները, ինչպես՝ «եմ-էի//եմ-էի»: Պակասող ձևերը լրացվում են
«լինել//ըլլալ» բայի համապատասխան ձևերով:

«Կամ» բայը ևս ունի միայն սահմանական եղանակի ներկա և անցյալ
անկատար ժամանակները, ինչպես՝ «կամ-կայի//կամ-կայի»:

«Գիտեն» բայն ունի միայն սահմանական եղանակի ներկա և անցյալ
անկատար ժամանակները, ինչպես՝ «գիտեն-գիտեի//գիտեն-գիտեի»: պակասող
ձևերը լրացվում են «գիտենալ//գիտենալ» բայի ձևերով:

«Ունենմ//ունիմ» բայն ունի միայն սահմանական եղանակի ներկա և անց-
յալ անկատար ժամանակները, ինչպես՝ «ունենմ-ունեի//ունենմ-ունեի»: պակասող
ձևերը լրացվում են «ունենալ» բայի համապատասխան ձևերով:

«Կրնամ» բայն արևմտահայերենում ունի բոլոր ժամանակածները՝ բացի սահմանական եղանակի ապառնի, անցյալի ապառնի և ըղծական ձևերից, որոնք էլ լրացվում են «կարենալ» բայով:

«Երդնուլ» բայն ունի միայն սահմանական եղանակի ներկա և ապառնի, ըղծական ապառնիի ժամանակածները: Պակասավոր ձևերը լրացվում են «երդում ընել» բայով:

«Պարտիմ» բայն ունի սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակները: Պակասավոր ձևերը լրացվում են «պարտաւորուիլ» բայի համապատասխան ձևերով:

«Երթալ» բայը չունի վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները, անցյալ կատարյալի և հրամայականի ձևերը: Դրանք լրացվում են «զնալ» բայի համապատասխան ձևերով: Արևելահայերենում պակասավոր են նաև «արժեն», «հուսալ», «լվալ», «ցանկանալ» բայերը, որոնց պակասող ձևերը լրացվում են «արժենալ», «հույս ունենալ», «լվանալ», «ցանկանալ» բայերի համապատասխան ձևերով: Համադրական քննությունից հետո պետք է նշել, որ դիմավոր ձևերի քերականականություններն ունեն բավականին շատ տարբերություններ երկու գրականներում: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ արևմտահայերենը հանդիսանում է սփյուռքահայության լեզուն: Վերջինս զրկված է տարածքային ամբողջականությունից և քերականական որոշ երևույթներ դրսևորման տարբեր ձևեր են ստանում:

Պակասավոր բայերը ևս երկու գրականներում մեծ թիվ չեն կազմում և հիմնականում համընկնում են, ինչպես՝ «են», «կամ», «գիտեն», «ունեն/ունին», «կրնամ», «երդնուլ» և այլն:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ արևմտահայերենը ներկայումս հանդիսանում է սփյուռքահայության լեզուն: Վերջիններս զրկված են տարածքային ամբողջականությունից, և լեզվական որոշ երևույթներ դրսևորման տարբեր ձևեր են ստանում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962:
2. Աճառյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964:
3. Այտընյան, Քննական քերականություն, Երևան, 1987:
4. Սաստրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1983:
5. Թորոսեան, Արդի աշխարհաբարի ծագումը և զարգացումը, 1961:
6. Մելքոնեան Զ., Գործնական քերականություն արդի հայերեն լեզուի, Պէյրուս, 1981:
7. Մուրվալյան Ա., Կը մասնիկի առաջացումը:
8. Շանթ Լ., Քերականություն արեւմտեան հայերէնի, Պէյրուս, 1932:
9. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964:
10. Սարգսյան Ա., Արևելահայ և արևմտահայ գրական լեզուները, Երևան, 1981:
11. Սաքապետոյան Ռ., Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006: